*11-12 դասարան*

## *3 միավոր գնահատվող առաջադրանքներ*

1) Ո՞րն է թռչուն:

Ա) աբեղածագ
Բ) ագեվազ
Գ) վիթ
Դ) քարբ

2) Երեք անգամ արտահայտությունը մեկ բառով կլինի՝

Ա) երրորդ
Բ) երեքական
Գ) երիցս
Դ) երեց

3) Տարբերակներից ո՞րն է ավելորդ:

Ա) մարալ
Բ) մարել
Գ) մերել
Դ) մուրալ

4) Տարբերակներից մեկը «երկերեսանի» է և խորամանկորեն խցկվել է ծաղիկների մեջ: Ո՞րն է այդ ինքնակոչ ծաղիկը:

Ա) մարգարտածաղիկ
Բ) խնկածաղիկ
Գ) ջրծաղիկ
Դ) ձնծաղիկ

Վերահրատարակումը միայն "Քնութսուս Լաբ"-ի թույլտվությամբ

5) Այդ չարաճճին որոշակի օրինաչափությամբ թաքնվել է կրակ,  ականջ, այգի, համեղ, տետր, աղջիկ, իսկա բառաշարքում: Ո՞վ կամ ի՞նչ է նա:

Ա) ծովային կենդանի
Բ) կենդանակերպի նշան
Գ) հեքիաթային հերոս
Դ) բանջարեղեն

6) Ո՞ր տարբերակն է սխալ:

Ա) խաղալ-խաղացած
Բ) կարդալ-կարդացած
Գ) խոսել-խոսացած
Դ) մտածել-մտածած

7) Տարբերակներից ո՞րն է կապակցում «թեթև» և «արծն» բառերը՝ լինելով մեկի հականիշը, մյուսի՝ գրաշրջումը (այսինքն՝ կազմված է նրա բոլոր տառերով):

Ա) ծորան
Բ) թերթ
Գ) ծանր
Դ) արծաթ

8) Սոնան կազմեց մի նախադասություն, դրա բառերը գրեց առանց միջակայքերի, այնուհետև երեք տառը մեկ բաժանեց գրվածը, մասերը խառնեց իրար, ու ստացվեց հետևյալը նկարի գրվածքը: Ի՞նչ նախադասություն էր կազմել Սոնան:

*ակա րաճ սպի տին կան:*

Ա) Սպիտակ ճուտիկ նա ունի:
Բ) Առաջ օրերը կարճ էին:
Գ) Սպի կա նրա ճակատին:
Դ) Նրա ճակատը սպիտակ է:

Վերահրատարակումը միայն "Քանգուրու Լար" -ի թույլտվությամբ

9) ՌՉ զույգը ո՞ր «տանն» է հանգրվանում իր զույգի հետ:

Ա) զաուրել
Բ) աամաել
Գ) նիել
Դ) ժպել

10) Ի՞նչ է գայլիկոնը:

Ա) Մետաղյա ծակող գործիք
Բ) Շների ընտանիքի գիշատիչ կենդանու ատամ
Գ) Թթազգիների ընտանիքի փաթաթվող բույս
Դ) Գայլի գավակ

## *4 միավոր գնահատվող առաջադրանքներ*

11) Եթե տարբերակների տառերից մեկն ավելացնես «անկար, տկար, ապիկար» բառերի հոմանիշին, այն կկերպարանափոխվի ու կդառնա «տաղանդ»-ի ու «քանքար»-ի հոմանիշը: Ո՞ր տառն է ապիկարին դարձնում տաղանդավոր:

Ա) տ
Բ) ք
Գ) հ
Դ)մ

Վերահրատարակումը միայն "Քննաթեստ Լար" -ի թույլտվությամբ

12) Ո՞ր տարբերակի բառն է թաքցրել մեղվիկը:

*զատիկ, վզնոց, գազար, մարզիկ,*  *գիմնազիա, համարզ*

Ա) երազանք
Բ) կորզել
Գ) գոհարազարդ
Դ) հորիզոն

13) «— Էլ փա՛ռ, էլ բորբո՛ս: Որտեղի՞ց եք ճարել էս ուտելիքը,— աչքերը երկինք բարձրացնելով՝ դժգոհեց բանտարկյալը:» Ի՞նչ գույնի էր երկինքն այդ պահին: Պատասխանը փնտրիր ընդգծված նախադասության մեջ:

Ա) երկնագույն
Բ) բորբոսագույն
Գ) կապտավուն
Դ) բոսոր

14) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա) սպասում
Բ) մերսում
Գ) սերում
Դ) սերմ




Վերահրատարակումը միայն "Քնութասուն ԼՄԲ"-ի թույլտվությամբ

15) Ի՞նչ գույն ունեն հերոսուհու աչքերը:

*Գնացիր քնքշօրոր քայլվածքով քո սիրուն,*
*Գնացիր՝ թարթելով աչքերը քո ծավի,*
*Չտեսար, չիմացար՝ ինչպես եմ քեզ սիրում,*
*Ա՜խ, ինչպե՛ս, ա՜խ, ինչպե՛ս իմ սիրտը չցավի:*

*Ա) կապույտ*
*Բ) շագանակագույն*
*Գ) կանաչ*
*Դ) կապտականաչավուն*

16) Երեխաներից ո՞վ չի սիրում հրամայել:

Ա) Կարինե
Բ) Նարեկ
Գ) Աննա
Դ) Տարոն

17) Ո՞ր կենդանիների խմբի անվանումը կստանաս, եթե ջնջես վանդակի այն տառերը, որոնք կրկնվում են հինգական անգամ:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ե | ն | մ | ու | ո | ի |
| ի | մ | ա | ո | ե | մ |
| կ | ո | ն | ի | հ | ե |
| մ | ն | ի | մ | ե | ի |
| ո | ե | ն | ո | ձ | ն |

Ա) աղվեսների
Բ) ձիերի
Գ) այծերի
Դ) կովերի

Վերահրատարակումը միայն "Քոնթեստս Լար" -ի թույլտվությամբ

18) Անգետիկը դասամիջոցին գրատախտակին գրեց «որձկալ,այժմէական, խուրց, պախուրձ, հանիպակաց, անստույգ, առընչվել, լվացք, փռփռալ, ալոջ» բառերը: Գիտունիկը կարդաց և ջնջեց բառերից մի քանիսը: Քանի՞ բառ թողեց գրատախտակին Գիտունիկը:

Ա) 4
Բ) 5
Գ) 6
Դ) 7

19) Ո՞ր տարբերակի բոլոր արտահայտություններն են «բացասական» իմաստով:

Ա) Տեղի տալ, տեղը նստեցնել, ի հայտ գալ
Բ) Ի հեճուկս, ինչի՞ է նման, տեղը տեղին
Գ) Բառերը քամուն տալ, տեղի տալ, ինչի՞ է նման
Դ) Ինձ տուր՝ քեզ տամ, գլխով անել, բառիս նեղ իմաստով:

20) Տարբերակների նախադասությունների զույգերից որո՞ւմ սխալ չկա:

Ա) Այդ դեպքն էր Արմենի վրա ազդողը:
Իրականում Դա Վինչին մահացել է աղքատության մեջ:

Բ) Բոլոր Հհամայնքների մշակույթի պալատները վերանորոգվեցին:
Անգլիայի համայնքների պալատը վերջապես ընդունեց կարևոր որոշում:

Գ) Սոֆի դևոյանի Հայկական պարը անզուգական էր:
Մի ուրիշ զգացում եմ ունենում հայկական Պար լեռնաշղթային նայելիս:

Դ) Ազգային Ժողովի նիստը հետաձգվեց:
Մեր Ծնողական ժողովը տեղափոխվեց այլ օր:

## *5 միավոր գնահատվող առաջադրանքներ*

21) Ո՞ր նախադասությունն է զերծ մնացել մակաբույծ բառերից:

Ա) Մայրենին դա իմ սիրելի առարկան է:
Բ) Ջուրը հանդիսանում է կյանքի աղբյուրը:
Գ) Ես ապրում եմ Հայաստանում:
Դ) Դավիթն իմ եղբայրս է:

22) Պատասխանի տարբերակների բառազույգերից մեկը որոշակի օրինաչափությամբ միահյուսվել-դարձել է նկարում բերված գրվածքը: Ո՞ր բառազույգն է դա:

ԱՍՐԵՏՇԱԱՇՏԱՐՏԱ

Գ) Աշտարակ — Արտաշատ
Ա) Արտաշես — Արտաշատ
Բ) Արարատ — Արագած
Դ) աշտանակ — աշտարակ

Վերահրատարակումը միայն "Քոլեջատաս Լաբ"-ի թույլտվությամբ

23) Կոտորակագիր կոչվող ծածկագրում մեր այբուբենի յուրաքանչյուր տառին համապատասխանում է մի կոտորակ, որի համարիչում և հայտարարում դրված կետերը որոշակի կապ ունեն տվյալ տառի հետ:

Օրինակ՝




Ի՞նչ է գաղտնագրվել հետևյալ կոտորակագրում.



Ա) Համբերությունը կյանք է:
Բ) Ամեն բանի վերջն է գովելի:
Գ) Վռազողին տղա չի լինի
Դ) Լռությունը ոսկի է:

24) Տարբերակների տառերը հերթով միացան <u>ՈՐ</u> բառին սկզբից ու վերջից և նոր բառեր դարձան: Ո՞ր տարբերակի տառը նեղացավ ու հեռացավ:

Ա) բ
Բ) հ
Գ) ձ
Դ) մ

25) Ո՞ր հայ արքան է թաքնվել հայկական քաղաքների շարքում:

*Արտաշատ, Հրազդան, Տաշիր, Վանաձոր, Արթիկ*

Ա) Տրդատ
Բ) Արշակ
Գ) Մենուա
Դ) Գագիկ

Վերահրատարակումը միայն … -ի թույլտվությամբ

26) Եթե բոլոր ամսանունները դասավորենք այբբենական կարգով, ապա տարվա առաջին ամիս հունվարն այդ ցանկում կհայտնվի վեցերորդ հորիզոնականում: Ըստ հերթականության՝ ո՞րերորդ տեղը կզբաղեցնի տարվա վեցերորդ ամիսն այբբենական այդ ցուցակում:

Ա) առաջին
Բ) երրորդ
Գ) հինգերորդ
Դ) յոթերորդ

27) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

55/6; 27/3; 100/3; 5/4; 48/4; 91/2; 24/1

Ա) երազանք
Բ) հարգանք
Գ) նպատակ
Դ) տասնյակ

28) Այբուբենի ո՞ր տառն է թաքցրել մեղվիկը:

ա գ զ  կ յ ռ ք

Ա) ը
Բ) թ
Գ) ժ
Դ) լ

Վերարտադրումը միայն "Քանգուրու Լար"-ի թույլտվությամբ

29) Ո՞ր ժողովրդական առածն է ծածկագրվել թվային շարքում:

1; 500; 40; 1; 5000; 70; 20; 500; 20; 400; 600; 90; 400;  7000; 9000; 1; 400; 4; 600; 90; 8; 30;  5; 6; 7000; 400; 7:

Ա) Ամեն բանի վերջն է գովելի:
Բ) Ամառվա փուշը, ձմեռվա նուշը:
Գ) Աշխարհի շինողն ու քանդողը լեզուն է:
Դ) Ասա՝ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու:

30) Վերծանիր նկարելուկը և գտիր ստացված արտահայտության պատասխանը:

Ա) 0
Բ) 2
Գ) 4
Դ) 8




Վերահրապարակումը միայն ... -ի թույլտվությամբ